

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մայն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported CC BY-NC 3.0 license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կայքով  
մեջդ հենց կամ ոչ ուղղակի առանց փոփոխության և առանց վնասի

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material







14p0076. 0-08194. 0-08194. 0-08194.

0-08194. 0-08194. 0-08194.

0-08194. 0-08194. 0-08194.

0-08194. 0-08194.

0-08194. 0-08194. 0-08194.

0-08194. 0-08194.



371.4

F-72 *այ-*

Պոլեմարներ բոլոր յեկրների, միացեմ.

Պ. Պ. ԲԼՈՆՍԿԻՅ

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑ

ՊՐԱԿ Ա.

ՎՈՐՆ Ե „ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԸ“

Թարգմ. Ս. ՂՈՒԿԻ

81893

|  |
|--|
| <p>№ 8</p> <p>Հրատարակութիւնն Ալեք-պոլի Գաղ. Լուսարածի</p> <p>1923</p> |
|--|

23

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Կրթության և Գիտության Կոմիտեի Կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱՆԻ ԿՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

---

Տպ. Կոմունիստական-Տեխնոլոգիական բաժնի Ս.Էֆ-պոլ

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍԳ

Հարկ կ'անկատելու, վոր նոր դպրոցին վերաբերող ձեռնարկներ մեր մանկավարժական գրականութեան մեջ բոլորովին չկան: Յեղած հատուկտոր գրքույկները կամ հողվածները պարբերականներում՝ միանգամայն անբավարար են նոր դպրոցի առաջադրած պրակտիկ խնդիրները լուծելու համար: Արևմտյան Յեվրոպայի կամ Ամերիկայի պայմանների ազդեցութեան տակ գրված յերկերի վողորմելի փոխադրութեանները չեն, վորոնցով պիտի առաջնորդվի աշխատանքի դպրոցի ուսուցիչը սոցիալիստական կարգերում: Այդ յերկրների անգամ ամենեն առաջադեմ մանկավարժների (վորոնց հայացքների աղավաղված փշրանքներով ե սնվել և մեր ուսուցչութեանը) գրվածքները լեցուն են բուրժուական իդեաներով, ուստի և անհարազատ՝ մեր նոր դպրոցական կյանքին:

Այս տեսակետից նաև ուսումնական մանկավարժական ամայի գրականութեան մեջ խիստ արժեքավոր ե հանդիսանում Պ. Պ. Բլոնսկու «Աշխատանքի դպրոց» գրքի հրատարակութեանը, վորի թարգմանութեանը պրակտիկ լույս ենք ընծայում:

Թե քաղաքի և թե գյուղի դպրոցին վերա



բերող կոնկրետ նյութեր պարունակող այս գլը-  
վածքը լավագույն ձեռնարկը կլինի մեր ուսու-  
ցիչների համար, վորոնք ներկա քաղաքական միջու-  
վայրում պիտի ջանան հեղինակի սոցիալիստական  
մտահայեցողութունից բղխած մանկավարժական  
խնդիրները յուրացնել և կիրառել: Պեստալոցցու,  
Կ. Մարքսի, Դյուրիի, Շարելմանի ազդեցության  
տակ հորինած այս յերկի մեջ արտացոլում է նոր  
դպրոցական ասպարեզում կատարվող կենդանի  
աշխատանքի և կոլեկտիվ ստեղծագործության  
պատկերը, նոր դպրոցի եյությունը լուսասրանող  
և պրակտիկ աշխատանքից բղխած բազմաթիվ  
հարցերի պատասխաններ ու ցուցմունքներ:

Մանավանդ այս պրակի նյութը մեր ուսու-  
ցիչների համար նոր է, ծանր, ուստի և խորհուրդ  
ենք տալիս ուշադրությամբ կարդալ մի քանի ան-  
գամ: II պրակը կպարունակի՝ «Աշխատանքի դըպ-  
րոցի մանկավարտեզը» (մոտ 60 էջ), III պրակը —  
«Աշխատանքի դպրոց առաջին աստիճանի» (մոտ  
175 էջ), IV պրակը — «Աշխատանքի դպրոց յերկ-  
րորդ աստիճանի» (մոտ 175 էջ):

Ալեք-պոլի գալ. Լուսաբաժին

Հոունիս, 1923 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Աշխատանքի նոր դպրոցի ուրվագիծը դեռ աղոտ պատկերանում է առավոտյան մշուշի մեջ, և նրանք, վորոնք յերջանիկ եյին ժողովրդի տգիտութեան գիշերը, ամեն հնար գործ են դնում, վոր ժողովրդի ասպագա լուսավորութեան արշալույսը դեռ մշուշի մեջ մարեն: Այս գիրքը շատ թերութեաններ ունի, սակայն հեղինակն իրավունք չունի շտապ չհրատարակելու, վորովհետև սա առաջին կոնկրետ գիրքն է, վոր խոսում է ռուսական նոր Աշխատանքի դպրոցի մասին:

1916 թվականի վերջին՝ հեղինակն իր հոգևածներից մեկում ռուս հասարակութեան համարյա թե անիծում էր՝ նրա ունեցած վերաբերմունքի համար դեպի մանկավարժութեան ու դպրոցը: Այժմ՝ հին վնասակար դպրոցն անցյալի բաժին է դարձել: Թող անկատար լինի այս գիրքը, սակայն հեղինակը հույս ունի, վոր «գործը միշտ կանդրադառնա ասլոդ սերունդների վրա»:

Այս գրքի մեջ ցուանում է Ֆրեբելի, Պեստալոցցիի, Մարքսի, Դյուի և Շարելմանի ազդեցութեանը: Բայց հեղինակն ավելի մեծ չափով պարտական է այն մարդկանց կենդանի

աշխատանքներին, վորոնք աշխատում են դպրո-  
ցում: Այս գրքին ծնունդ տվին լուսավորության  
գավառային գործիչների հարուցած հարցերը և  
Մոսկվայի մանկավարժական ժողովները: Իվերջո  
հեղինակն իր սրտանց յերախտագիտությունն և  
արտահայտում լուսավորության գործին այնքան  
անձնատուր յեղած մարդուն՝ Լ. Ք. Տերեխովին,  
վոր իր ցուցմունքներով և խորհուրդներով ոգհել  
և այս գիրքը նախագծելու և գրելու ժամանակ:

Պ. Բլոնսկի

## ՎՈՐՆ Ե „ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԸ“

Հասարակական հառաջադի մու-  
թյունը կախված է նրանից, թե  
ինչ վիճակում և գտնվում ճար-  
տարարվեստ աշխատանքը (ին-  
գուստրի):

### 1. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի դպրոցը՝ աշխատային կրթության  
դպրոց է: Աշխատային կրթության ելուժյունը մենք  
կարող ենք ըմբռնել այն դեպքում, յերբ կանխորեն  
պարզենք աշխատանքի ելուժյունն ընդհանրապես:

Աշխատանքը մի այնպիսի գործողություն է՝  
մարդու և բնության մեջ կատարվող, վորի միջոցին  
մարդը բնությունը յենթարկում է իր կամքին, ստի-  
պելով նրան ծառայել մարդկային պահանջներին: Այդ  
գործողության մեջ մարդը հանդես է գալիս Վորպես  
մի եյակ, վոր զգում է վորոշ պահանջներ և գործում  
է՝ այդ պահանջներին քավարարություն տալու համար.  
Իսկ բնության իրերն ու յերևույթները մարդկային  
գործունեյության ազդեցությամբ ընդունում են գոր-  
ծածվող արժեքավոր առարկաների ձևեր: Արտադրո-  
ղական աշխատանքը մարդկային մի այնպիսի գոր-  
ծունեյություն է, վորը տվյալ առարկաները վերա-  
ծում է մարդկության համար ոգտակար առարկաների:

Այսպիսով աշխատային կրթությունը կայանում է  
նրանում, վոր մանուկը համաչափ և կազմակերպ վարժվի

այնպիսի նպատակահարմար գործունեյութեան մեջ, վոր տվյալ առարկաներից ստեղծագործում է մարդկութեան համար ոգտակար առարկաներ, այսինքն՝ այնպիսի առարկաներ, վորոնք ունին սպառողական արժեքներ: Ստանալով աշխատային կրթութեան, մանուկը զարգանում է վորպես մի եյակ, ընդունակ բնութեանն ստիպելու, վոր նա ծառայե մարդկային պահանջներին: Աշխատային կրթութեանը բնութեան վրա տիրապետողի կրթութեանն է:

Սակայն աշխատանքի մեջ ամենից բնորոշը վո՛չ այնքան աշխատանքի արդյունքներն են, այսինքն՝ առարկաներից ստեղծագործած սպառողական արժեքները, վորքան աշխատանքի գործիքները և յեղանակը: Աշխատանքի մասին խոսել՝ կնշանակե նախ և առաջ խոսել աշխատանքի գործիքների և յեղանակի մասին, և դրանց մեջ է, վոր մենք պետք է վորոնենք աշխատանքի եյութեանն ըմբռնելու բանալին:

Աշխատանքի պատմութեան շրջանները վորոշվում են հատկապես նրանով, թե աշխատանքի ինչպիսի գործիքներ կային և ինչպես էյին ոգտվում նըրանցով տվյալ դարում:

Յեւ այսպես, աշխատային կրթութեան միջոցին ամենաանհրաժեշտն է՝ զարգացնել յերեխայի մեջ ունակութեան՝ ոգտվելու աշխատանքի գործիքներով: Մանուկը՝ տիրապետելով այդ գործիքներին, տիրապետում է՝ բնութեանը մարդկային պահանջներին հպատակեցնելու միջոցներին: Աշխատային կրթութեան եյութեանն է՝ զարգացնել աշխատանքի գործիքներով և տեխնիկայով ոգտվելու մանկան կարողութեանը:

Այսպես ուրեմն, պարզելով աշխատանքի գործողութեանը, մենք դրանով պարզած կլինինք աշխատային կրթութեանն՝ նպատակը, եյութեանը, մեթոդը

(յեղանակը) և իմաստը: Աշխատային կրթութեան նը-  
պատակն է՝ զարգացնել մանուկի մեջ կարողութեան  
բնութեան առարկաներից և յերևույթներից ստեղծա-  
գործելու մարդկութեան համար ոգտակար առարկաներ:  
Աշխատային կրթութեան ելութեանն է՝ վոր մանու-  
կը տիրապետե աշխատանքի գործիքներին և տեխ-  
նիկային: Աշխատային կրթութեան մեթոդն է՝ համաչափ  
և կազմակերպ վարժեցնել յերեխային աշխատային գոր-  
ծունեյութեան մեջ: Աշխատային կրթութեան իմաստը՝  
կրթել ուժեղ մարդ, վոր տիրապետե բնութեան վրա  
իշխելու գործիքներին և ծառայեցնե բնութեանը մար-  
դու ոգտին և կարիքներին:

## 2. Կոպերացիան յեվ աշխատանքի գալոցը

Վերցնենք մի վորևե աշխատանք: Ատաղծագոր-  
ծը շինում է տուն: Այդ աշխատանքը, տուն շինելը,  
մի մարդու ուժից վեր է: Շինութեան վրա աշխատում  
են մի քանի ատաղծագործներ: Այդ բոլոր ատաղծա-  
գործները կամ միասին կատարում են միևնույն գոր-  
ծը, կամ իրար մեջ բաժանում են միևնույն գործի  
զանազան մոմենտները: Այսպես են նաև ուրիշ շատ  
տեսակ աշխատանքներ: Շատ հաճախ աշխատանքը  
հանդիսանում է հավաքական (կոլեկտիվ) գործունե-  
յութեան, աշխատակցութեան, համագործակցութեան  
(կոպերացիա): Սակայն ատաղծագործի աշխատանքը  
հաջորդական մոմենտներից մեկն է այն բազմատեսակ  
աշխատանքների, վորոնք սկսվել են դեռ անտառում՝  
ծառը կտրելիս և շարունակվել են սղոցարանում:

Մյուս կողմից տան շինութեան վրա աշխատում  
են վոչ միայն ատաղծագործներ, այլև ներկարարներ,  
հարկողներ և ուրիշները: Յեղել է ժամանակ, յերբ

միևնույն մարդը կտրում եր ծառը, տաշում եր, շինում եր տուն, ծածկում եր կտուրը և այլն: Իսկ այժմ տուն շինելու համար հարկավոր է միանգամայն տարբեր մասնագետների գործակցությունը: Չարգացած հասարակության մեջ աշխատանքն առհասարակ հանդիսանում է մասնագետների աշխատակցություն: Առանձին անհատ-աշխատավորը դառնում է աշխատավոր կոլեկտիվի մի մասնիկը:

Ի նկատի առնելով այդ հանգամանքը, մենք կարող ենք ավելի պարզ պատկերացնել մեզ աշխատանքի դպրոցի եյությունը:

Չարգացած հասարակության մեջ կղզիացած անհատական աշխատանքն ավելի շուտ վերացականություն է (արատրակցիա): Աշխատային կրթությունն անխուսափելի կերպով յենթադրում է կոլեկտիվ աշխատանք, ուրիշ խոսքով—աշխատային կոպերացիա: Աշխատանքի դպրոցը մանկական աշխատային կոպերացիա չէ (համագործակցություն):

Աշխատանքի դպրոցի բովանդակությունը պիտի կազմեն վոչ թե վերացական «աշխատային պրոցեսները», այլ ամբողջական և կապակցված կոնկրետ արտադրությունը: Աշխատանքի դպրոցը, ինչպես և մարդկային աշխատային կյանքը, ծագում է ամբողջական կենսական խնդիրներից, մարդու կենցաղական կոնկրետ պահանջներից, պահանջ բնակարանի, հագնելիքի, սնունդի, անոթների և այլն: Այդ պահանջներին բավարարություն տալու հանգամանքը առաջ է բերում հավաքական աշխատանք:

Այդ կոլեկտիվ աշխատանքը յերեխաներին ստիպում է ընդհանուր նախապծով արդյունաբերել միևնույն գործը, կամ ավելի հաճախ՝ միասին բաժանում են իրանց մեջ այդ գործի գանազան մոմենտները:

Այսպես, հասարակական պահանջներին բավարարու-  
թյուն տալու համար, աշխատանքն իրանց մեջ բա-  
ժանելու գործողութեան մեջ՝ յերեխաները կազմա-  
կերպւում են և յերեխա-հյուշեններից կազմում են ման-  
կական աշխատային ընկերակցութիւն: Յերեխաների  
հավաքական աշխատանքը կազմում և աշխատանքի  
դպրոցի հիմքը, այդ հավաքական աշխատանքը հենց  
ինքը դպրոցն է:

Վերջին հաշիւում, ամեն մի առանձին անհատ-յե-  
րեխայի գործը ընդհանուր կոլեկտիվ գործի միայն մի  
մասն է կազմում, իսկ ինքը՝ յերեխան, աշխատավոր  
կոլեկտիվի մի մասնիկը: Դրանով մեկ կողմից ձեռք և  
բերւում հասարակական գաստիարակութիւն և աշ-  
խատային դիսցիպլին, մյուս կողմից՝ մանուկն ստա-  
նում է աշխատային հմտութիւն, տեխնիքական կորո-  
վամտութիւն՝ իրան բաժին ընկած աշխատանքի մաս-  
նակի տեսակների մեջ, նուրբ կատարելութեան աստի-  
ճանին հասցրած աշխատանքի գործիքներով ոգտվե-  
լու մաքսիմալ մասնագիտական վարժութիւն:

Ուրեմն, աշխատային կրթութիւնը հասարակա-  
կան աշխատային կրթութիւն է: Աշխատանքի դպրո-  
ցը մանկական աշխատային կոպերացիա յէ, մանկա-  
կան աշխատային ընկերութիւն, վորը կազմակերպ-  
ւում է՝ աշխատանքը յերեխաների մեջ բաժանելու  
ընթացքում՝ ընդհանուր միասնական նպատակին  
ավելի հաջողութեամբ հասնելու համար, վոր չա-  
փով այդ աշխատային կոլեկտիվը միացած է կոլեկ-  
տիվ գործով, նույն չափով աշխատանքի դպրոցը հա-  
սարակական կրթութեան դպրոց է: Ինչ չափով այդ  
կոլեկտիվի ամեն մի անդամը տեխնիկորեն հմտանում  
և զանազան աշխատանքների զանազան գործիքներ  
ոգտագործելու մեջ, նույն չափով աշխատանքի դպրո-



ցը աշխատային դաստիարակութեան և աշխատային կրթութեան դպրոց եւ:

### Յ. Ճարտարարվեստ (Ինճուստրի) յեւ յերեսասարգ- ների աշխատային կրթութիւնը

Ճարտարարվեստ ասելով մենք հասկանում ենք արտադրութեան մեքենական յեղանակը, այսինքն՝ աշխատանքի այնպիսի յեղանակ, Վորի միջոցին աշխատանքի ձեռքի գործիքը փոխարինւում և մեքենայով, և այդ մեքենայի շարժիչն էլ վոչ թե սովորաբար մարդն և հանդիսանում, այլ բնութեան այս կամ այն ուժը: Ճարտարարվեստը, Վոր մարդու գերագույն հաղթանակն և բնութեան վրա, մեր գարի համար շատ բնորոշ է:

Մեքենան, մկանային ուժը դարձնելով միանգամայն ավելորդ, հնար և տալիս թուլակազմ բանվորներին և անշափահասներին աշխատելու, ինչպէս այդ արդեն ցույց և ավել կապիտալիստական արդյունաբերութեան փորձը. այդպիսիների աշխատանքը տեխնիկորեն միանգամայն հնարավոր և արտադրութեան մեքենական յեղանակի միջոցին: Դեռ ավելին, — միայն ճարտարարվեստ աշխատանքը կարող է աղբյուր դառնալ ինտենսիվ և լայն կրթութեան:

Մեքենական գործի ժամանակ թեև հարկավոր է վորոշ չափով պատրաստութեան, սակայն՝ շնորհիվ մեխանիզմի միակերպ ինքնաշարժ (ավտոմատիք) գործունեութեան, այդ պատրաստութեան համար այլևս յերկար ժամանակ չի պահանջվում:

Մեքենական արտադրութեանը հնարավորութեան և տալիս՝ մեկ մեքենա կառավարելու մեջ հրմտանալուց հետո՝ անցնել մի ուրիշ մեքենայի ծանո-

թուփյան: Իրանով ել հենց հնարավոր ե դառնում  
աշխատային բազմակողմանի կրթությունը:

Սակայն ճարտարարվեստ արտադրության սկզբ-  
բունքը կայանում ե նրանում, վոր աշխատային  
բարդ գործողությունը մեքենաբար ե դիտողաբար  
վերլուծվի իր բազադրիչ տարրերին: Չանազան մե-  
քենաների դիտողությունը իցույց ե բերում մեխա-  
նիզմի ե շարժումների տարրական հիմնական ձևերը:

Բազմակողմանի ճարտարարվեստ գաստիարա-  
կությունը առաջնորդում ե դեպի մի շարք տեսական  
ընդհանրացումներ, առաջնորդում ե դեպի ճարտար-  
արվեստի տեխնիքայի փիլիսոփայությունը, յեթե  
կարելի յե գործ ածել այդ հին տերմինը:

Այդ աշխատային ընդհանրացումները վոչ այլ  
ինչ են, յեթե վոչ բնական դիտությունների գործա-  
դրությունը կյանքի մեջ: Վոչ մի տեղ աշխատանքի  
կապը գիտության հետ այնպես վորոշակի ե ակնհայտ  
հանդես չի գալիս, ինչպես հատկապես ճարտարարվես-  
տի մեջ: Ճարտարարվեստի տեխնիկայի փիլիսոփայու-  
թյունը, ընդհանրացումները մեզ ուղիղ ճանապարհով  
առաջնորդում են դեպի գիտության սահմանը: Ճար-  
տարարվեստի մեջ տեխնիքական ե գիտական կրթու-  
թյունը սերտ կապակցված են:

Յեվ այսպես, աշխատային բարձրագույն կրթու-  
թյունը՝ ճարտարարվեստ կրթությունն ե: Ճարտար-  
արվեստ աշխատանքը, վոր տեխնիկորեն մատչելի յե  
յերիտասարդիներին ե անչափահասներին, տալիս ե վոչ  
թե միակողմանի տեխնիքական կրթություն, այլ  
բազմարվեստյան կրթություն: Ճարտարարվեստ բազ-  
մարվեստյան դպրոցը ստեղծում ե բանվոր-փիլիսոփա  
ե նրա առաջ բաց ե անում գիտական-տեխնիքական  
ամբողջական կրթության լայնարձակ հեռանկարները:

Ճարտարարվեստը (ինդուստրի), վոր մարդկության գերագույն նվաճումն է բնության տիրապետության մեջ, միաժամանակ հանդիսանում է նաև գերագույն ուսուցիչը մարդու ամբողջական բազմարվեստյան-գիտական- փիլիսոփայական կրթության:

Աշխատային կրթությունն է, վոր պատրաստում է բնության ապագա հզոր տիրապետողին: Աշխատային մանկական կոպերացիան, այսինքն՝ աշխատանքի տարրական դպրոցը, հիմքն է այդպիսի կրթության մանկական հասակում, իսկ ճարտարարվեստ բազմարվեստյան դպրոցը հետագայում այդ հիմքի վրա կառուցանում է XX ճարտարարվեստ դարի յերիտասարդի ժամանակակից աշխատային ճշմարիտ կրթությունը:

#### 4. Կրթական յեվ պրոՔեսիոնալ արհեստային գպրոցը

Աշխատանքի դպրոցի մեր սահմանումը բնավ դեռ չի ընդունված ընդհանուրի կողմից: Շատ հաճախ աշխատանքի դպրոց ասելով հասկացվում է բացառապես ձեռարհեստ աշխատանքի դպրոց: Այդ տեսակ դպրոցը ձեռքի աշխատանքը դարձնում է գլխավոր, յերբեմն մինչև անգամ դպրոցի կենտրոնական առարկան, ոգտվում է ձեռքի աշխատանքով նաև վորպես ուսուցման մեթոդ՝ ուրիշ առարկաների ավանդման ժամանակ: Ուսուցանել գլխավորապես ձեռարհեստը է ձեռարհեստի միջոցով ամեն բան-ահա սա յե այդպիսի աշխատանքի դպրոցի նշանաբանը. դրա համար ել մենք այդպիսի դպրոցը կանվանենք արհեստային (русская ремесленная) աշխատանքի դպրոց:

Արհեստային աշխատանքի դպրոցի գաղափարախոսն է Կերշենշտեյները: Նրա կարծիքով, պետության

մեջ մարդկանց հսկայական մեծամասնությունը զբաղ-  
ված է զուտ Ֆիզիքական աշխատանքի արհեստներով,  
և այդպէս ել կլինի միշտ, վորովհետև ամեն մի մարդ-  
կային ընկերակցություն կարիք է զգում անհամեմատ  
ավելի Ֆիզիքական, քան թե մտավոր աշխատավոր-  
ների: Բացի դրանից արհեստը հիմքն է կազմում բո-  
լոր իսկական արվեստների և գիտությունների: Յեւ  
վերջապէս մանուկի մեջ յերևան են գալիս բնազդներ  
ու հակումներ հատկապէս դեպի Ֆիզիքական գործունե-  
յություն: Ուրեմն դպրոցը պետք է պատվաստե մտած-  
ված, որինակելի, համերաշխ, ազնիվ ձեռարհեստի սո-  
վորությունը և դրանով անհրաժեշտ պատրաստու-  
թյուն տա ապագա արվեստի համար:

Այդ արհեստային կրթութեան հետ հեշտութեամբ  
կապվում է հասարակական բարոյական դաստիարակ-  
ությունն այն չափով, վոր չափով աշխատանքի նման  
դպրոցը կազմակերպված կլինի ինքնավար աշխատա-  
վոր ընկերակցութեան վոգով: Վերջին հաշվում՝ աշ-  
խատանքի դպրոցը նախ և առաջ բնավորութեան կրթ-  
ութեան դպրոց է, և աշխատանքի դպրոցի իմաստը  
կայանում է նրանում, վոր գիտական նյութի մինի-  
մումով ցուցադրվին մաքսիմում կարողություններ,  
ընդունակություններ և աշխատանքի ուրախություն:

Սակայն աշխատանքի այդպիսի արհեստային  
դպրոցը համապատասխան է վոչ թե ժամանակակից, այլ  
աշխատանքի հնացած յեղանակին, ըստ վորում մեր  
դարը մեքենական ճարտարարվեստի դար է և վոչ  
թե ձեռարհեստի: Կերշենշտեյները պատկերացնում է  
իրան զանազան համաքարությունների գործանոցը և  
նրա մեջ ապագա վարպետ-արհեստավորին, վորպէս  
աշակերտ: Ժամանակակից ճարտարարվեստը և մեքե-  
նան խորթ են մնացել Մյունխենի մանկավարժի հա-

մար, վորը վերակազմել է իր դարն անցած արհեստավորական դաստիարակութեան սխտեմը և չի ըմբռնել, թե ինչ կարող է ուսուցանել մեքենան:

Բացի դրանից կասկածելի չէ, թե նման արհեստային դպրոցը վճարքան կարող է լինել կրթական դպրոց: Մյուսնխենի դպրոցների սխտեմում՝ այդ դպրոցը համարված է վորպես «լրացուցիչ» դպրոց, և դա միանգամայն հասկանալի չէ: Աշխատանքի այդպիսի դրսւրոցը հնարավոր է միայն, վորպես լրացումն կրթական դպրոցի. համբարական սկզբնական կրթութեամբ չեն հաշտվի մարդու դաստիարակութեան իդեյալի հետ, դեռ մի կողմ թողած, վոր ժամանակակից հասարակութեան մեջ պրոֆեսիոնալ-արհեստային պատրաստութեամբ պայմանավորվում է միայն նախընթաց ընդհանուր կրթութեամբ, ինչպես վոր մասնագետ ըմբիշի պատրաստութեամբ՝ ֆիզիքական ընդհանուր կրթութեամբ:


Գուցե արհեստային ուսումը հնարավոր է, վորպես ընդհանուր և վոչ թե միայն պրոֆեսիոնալ կրթութեամբ: Այդպիսի հնարավորութեամբ շատ կասկածելի չէ: Արհեստների բազմութեամբ բնավ այնպես մասշեյի կերպով չի ցուցադրում գործիքների և շարժումների տարրական հիմնական ձևերը, ինչպես մեքենաները, և հետևապես արհեստային դպրոցը անհամեմատ ավելի քիչ պարզ նյութ է տալիս բազմարվեստյան ընդհանրացումների համար: Յեւ այսպես, լինի նույն իսկ մանկավարժը չափազանց սրամիտ, բազմարհեստ դպրոցը հազիվ թե կարողանա լինել ուսողական, մանավանդ յերկրորդ աստիճանում: Յեւ վերջապես վորևէ արհեստ սովորելու համար հարկավոր է ավելի շատ ժամանակ, և այդ պատճառով բազմարհեստյան աշխատային դպրոցը կարող է տալ ավելի խղճուկ

արդյունքներ, քան թե բազմառարկյան ուսման դպրոցը: Մի խոսքով, զուտ արհեստային աշխատանքի դպրոցը յերկու յելք ունի. կամ լավ դրված պրոֆեսիոնալ-համաքարական ուսում, կամ անշնորհք, մակերեսային շատ արհեստներ: Բացի դրանից, արհեստի մեջ տեխնիկայի կապը գիտության հետ հաճախ լինում է շատ հեռավոր (հակառակ մեքենական ճարտարարվեստի): Ծանոթանալով այն դպրոցների ծրագիրներին, վորտեղ գիտական կրթությունը կենտրոնանում է բացառապես արհեստների շուրջը, մտրդ զգում է, վոր ամեն բան չափազանց արհեստական է և շինծու:

Յեվ այսպես, արհեստային աշխատանքի դպրոցը հաղիվ թե կարողանա լինել կրթական դպրոց բառիս լայն մտքով. ձեռարհեստը մեզ համար խորթ չպետք է լինի, բայց մենք չպետք է հրապուրվենք, տարվենք նրանով: Մենք մեկնում ենք նրանից և վոչ թե դիմում գեպի նա. ձեռարհեստը լրացնում է, այն էլ մասամբ, միայն առաջին աստիճանի դպրոցի ծրագիրը:

Արհեստային դպրոցը չի կարող XX դարի մարդու գերագույն ուսուցիչը լինել և նրան տալ ամբողջական բազմարվեստ-գիտական-փիլիսոփայական կրթություն: Պետք է այդ նախապաշարումին վերջ դնել: Ձեռարհեստին մենք հակադրում ենք մեքենան և գիտությունը, արհեստին՝ ճարտարարվեստը, պրոֆեսիոնալիզմին-բազմակողմանի գիտական, տեխնիքական ընդհանրացումներ: Մեր նպատակն է վոչ թե արհեստային գործանոցի ուստա պատրաստել, այլ մեծամեծ հայտնագործությունների և հեղաշրջումների հրաշալի դարի, շոգու և էլեկտրականության դարի արժանավոր ժամանակակից մարիդ

A 2951



**5. ԱՇԽԱՏԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՄԱՏԻՎ ՂԱՐՈՅ**

Ձեռարհեստի այն տեսակ զարոյը, ինչպիսին մենք քննութեան առանք, հիմնված է սխալ կարծիքի վրա. իբր թէ ձեռարհեստով պարապելը հիմքն է կազմում ճարտարարվեստ կուլտուրայի դարի կրթութեան: Նման ձեռարհեստը շատ անգամ է յենթարկվել քննութեան: Դրա համար ել մի շարք մանկավարժներ պնդում են, վոր ձեռարհեստը զարոյում պետք է ծառայել լոկ միայն վորպէս մեթոդ դաստիարակութեան և կրթութեան, ըստ վորում ձեռարհեստը դարգացնում է ճշգրիտ դորժոն դիտողականութեան, մտքի պարզութեան և կարողութեան՝ նյութապէս արտահայտել գաղափարները, մյուս կողմից էլ նա դաստիարակում է կամքը և բնավորութեան հասարակական-դեմոկրատական հատկութեանները:

Յեղակետ ունենալով այդ մտքերը, շատ մանկավարժներ մացնում են ժամանակակից ուսման զարոյցի ծրագրի մեջ ձեռարհեստը, վորպէս մեթոդ բոլոր առարկաների համար. լինի լեզվի դաս, թէ մատեմատիկայի, պատմութեան թէ աշխարհագրութեան, բնագիտութեան թէ դրականութեան-բոլոր: այդ դասերին աշակերտները կառուցանում են, նկարում են, կաղապարում են, ամեն կերպ նյութապէս պատկերավորում են այն բոլորը, ինչ վոր կազմում է իրանց ուսումնասիրութեան առարկան: Պայմանավորվենք անվանել այդպիսի զարոյը, ինչպէս արատիվ զարոյ:

Ինչպէս պետք է վերաբերվենք ինչպէս արատիվ զարոյին: Այդ զարոյը դիտողական ուսուցման զբաղրոյցի դարգացման դերագույն աստիճանն է, այն զբաղրոյցի, վորը հիմնված է աշակերտի անձնական զգայական ըմբռնումների վրա: Ինչպէս արատիվ զարոյը՝

գործոնս դիտողականութեան դպրոց եւ Առարկայի ճա-  
նաչողութեանը միացնելով առարկայի կառուցման  
հետ, նա աշակերտի ըմբռնողութեանը հասցնում եւ  
վորոշութեան եւ պարզութեան գերագույն աստիճանին,  
դրդում եւ նրան զննել, վորոնել, լինել գործոնս առար-  
կայի ճանաչողութեան մեջ: Մի խոսքով, իլյուստրա-  
տիվ դպրոցն ունի դիտողական ուսուցման բոլոր  
առավելութեանները գերագույն աստիճանով, եւ այս  
կողմից նա արժանի յե ամեն տեսակ գովասանքի:  
Սակայն ժամանակակից դպրոցում դիտողական ուսու-  
ցումը հասցնել գերագույն աստիճանի կատարելու-  
թեան, դեռ դա չի նշանակում լավ դպրոց ունենալու  
խնդիրը լրիվ լուծել: Դեպի ժամանակակից դպրոցը  
մեր ունեցած բացասական վերաբերմունքը ծագում եւ  
վոչ թե միայն նրա մեթոդների թերութեաններից,  
այլ ավելի մեծ չափով մեզ չի գոհացնում նրա ներքին  
կուլտուրական բովանդակութեանը, նրա ծրագիրը:  
Վերջապես, վոր ամենից գլխավորն եւ, մենք չափազանց  
անբավական ենք նրա հենց կազմով, վոր ամենայն  
սեթեւեթութեամբ իր մեջ միացրել եւ դպրոց-վանքի,  
դպրոց-գործանոցի եւ բյուրոկրատական դպրոցի պատ-  
մական շերտավորումները: Մենք ժամանակակից դպրո-  
ցական ամբողջ կազմը գտնում ենք անհամապատաս-  
խան եւ ժամանակակից կուլտուրայի վողուն, եւ ժո-  
ղովրդի պահանջներին, եւ մանուկի հոգեբանութեան:  
Անհրաժեշտ եւ վոչ թե ժամանակակից դպրոցի ուսուց-  
ման մեթոդը կատարելագործել, այլ ամբողջ դպրոցա-  
կան կազմը բարեփոխել:

Առհասարակ իլյուստրատիվ դպրոցը համարում են  
հեշտ իրագործելի դպրոց: Սակայն այդպիսի մի նկա-  
տառում իր հիմքում սխալ ունի, ամեն մի արմատապես  
անկատարի կատարելագործելու փորձերը մեզ կտանեն,



կմտցնեն փակուղի: Ճիշտ իրագործելի յե, իհարկե, յեթե՝  
առանց ձեռք տալու ժամանակակից դպրոցի կազմին  
և նույն իսկ ծրագրին, այժմյան դասերին մտցնենք  
միայն ձեռարհեստը, վորպես ուսուցման մեթոդ, այսին-  
քը՝ կատարելագործենք այժմյան դպրոցի միայն մեթո-  
դը: Բայց այստեղ մի քանի հարցեր են ծագում:— Հնա-  
րավոր ե արդյոք նույն իսկ մեթոդը բարեփոխել, պահ-  
պանելով ժամանակակից դպրոցական կազմի էյական  
գծերը: Իլյուստրատիվ դպրոցը, վոր հիմնված է մեթոդի  
կատարելագործության վրա, հետագայում դասատուներ-  
ից չի՞ պահանջիլ արդյոք հսկայական մեթոդական  
նրբամտություն մինչ այն աստիճան, վոր տարրական  
դպրոցում դասարանական սիստեմն այլևս անհնարին  
դառնա: Շահ կունենա՞ արդյոք տարրական դպրոցը,  
յեթե անցնի միմյանց հետ մեքենաբար կապված ուս-  
ման առարկաների ուսումնասիրության սիստեմին՝  
մասնագետ ուսուցիչների ղեկավարությամբ, և այն ել  
այնպիսի մի ժամանակ, յերբ ամբողջական կրթության  
և դպրոցական դաստիարակության (և վոչ թե միայն  
ուսուցման) միասնականության քարոզն ե լավում:  
Վորքան իրագործելի յե ընդհանուր կրթությունը  
տարրական դպրոցներում, յերբ դրանք վերածվում են  
գիմնազիական տիպի դպրոցների: Կտա՞ արդյոք բա-  
վարարություն այդպիսի դպրոցը ներկայի պահանջ-  
ներին: Դպրոցական աշխատավորներն արդյոք շու-  
տով չեն նկատիլ, վոր դա հին դպրոցն ե՞ նորոգված:  
Յեվ վերջապես իլյուստրատիվ մեթոդը շատ դեպքե-  
րում նյութական դիտողականությունը անհեթեթու-  
թյան չի՞ հասցնում արդյոք:

Համենայն դեպս մենք յերբեք չպետք է շփոթենք  
իլյուստրատիվ դպրոցը աշխատանքի դպրոցի հետ:  
Յերկու տեսակ դպրոցների մեջ վոչ մի ուղղակի կապ

չկա, և վոչ մի բնական անցում չի կարող լինել իւրու-  
տրատիվ դպրոցից աշխատանքի դպրոցին:

### 6. Ա.Բխասանի յեվ սրագիցիոն դպրոց

Իսկական աշխատանքի դպրոցը միանգամայն և  
վճռապես իր կապը պետք է խզե ավանդական (տրա-  
դիցիոն) դպրոցի հետ, վորին սովորաբար անվանում  
են ուսման դպրոց (ուսումնարան): Պարզելով ավան-  
դական դպրոցի եյությունը, մենք հակադրության  
մեթոդով կարող ենք ավելի պարզ և վորոշ պատկե-  
րացնել նաև աշխատանքի դպրոցի եյությունը:

«Շկոլա» (դպրոց) բառը հունական ծագում ունի  
և կնշանակի «պարապ» (ժամանակ): Դպրոցի պատ-  
մական տեսությունը սերտ կապված է «պարապ»-ի և  
աշխատանքի մասին հասկացողության հետ, վոր հիմ-  
նված է հին հունական ճորտական տնտեսավարու-  
թյան վրա:

Հները, ինչպես որինակ Արիստոտելը, բացասա-  
բար եյին վերաբերվում Ֆիզիքական աշխատանքին և  
արհեստին, և կյանքի թագն ու պսակը, արժանի  
ազատ, ազնիվ մարդուն, համարում եյին պարապ  
կյանքը: Այդ պարապությունը, վայել ազատածին  
քաղաքացուն, հասկացվում էր, վորպես իմացական  
(«տեսական») կյանք, վորը հույն մտածողները գե-  
րազանց եյին համարում արհեստավորի կյանքից և  
նույն իսկ քաղաքական գործունեյությունից, և իսկա-  
տիվ վորի հին մտքի այնպիսի հանճարներ, ինչպես  
Պլատոնը, Արիստոտելը և Պլոտինը, ներբողներ եյին  
յերգում:

Այս հիմունքների վրա վերջիվերջո ստեղծվում  
է «ազատ», տեսական գիտությունների ավանդական

դպրոցը, կտրված աշխատանքից և աշխատային կուլ-  
տուրայից, և դառնում է լսելու, խորհելու և իմանա-  
լու դպրոց, բայց վոչ յերբեք գործի դպրոց: Հին հո-  
գերանությունը մարդկային հոգու եյությունը, նրա  
վոզին, տեսնում էր մտքի մեջ և հատկապես խոհական  
մտքի մեջ: Չեռարհեստը հալածվում էր, վորպես ազ-  
նիվ մարդկանց զավակների համար մի անվայել և  
անարժան դրադմունք: Առհասարակ գործունեյու-  
թյունը, կամքը, բնավորությունը բավարար չափով  
չէին կրթվում մտքի դաստիարակության այդ դպրո-  
ում: Միտքն էր միայն, վոր անձնատուր էր լինում  
գերագույն ճշմարտության և գեղեցկության մասին  
մտածության: Պարզ յերևում է, վոր ավանդական  
դպրոցը հարմարեցված էր անաշխատ դասակարգերի  
դաստիարակության համար:

Համարյա մի հազարամյակ յեվրոպական դպրո-  
ցըն իր գոյությունը պահպանեց, վորպես վանական  
դպրոց՝ իր աստվածաբանական-սխոլաստիք բեռով  
(բազաժով): Այդ դպրոցի միմյանց հաջորդող հե-  
տագա յերկու շրջաններում (Trivium-քերականու-  
թյուն, հոետորություն և տրամախոսություն, Quadrivium  
թվաբանություն, յերկրաչափություն, աստղաբաշխու-  
թյուն, յերաժշտություն), յերբ բոլոր ուսմունքների  
թագն ու պսակը կազմում էր աստվածաբանությունը,  
մենք նշմարում ենք հռչակավոր յեռյակի (կրոն, մայ-  
րենի լեզու, մատեմատիկա) նախանշանները. նոր ժա-  
մանակում այդ վանական դպրոցը տեղի տվավ հու-  
մանիստների ձեռքով հիմնված գիմնազին, վորի  
հասարակական-մանկավարժական դերը լավ են վորո-  
շել ոեֆորմացիայի ժամանակ գերմանական իշխան-  
ները, վորոնք համարում էին, թե այդ դպրոցը հիմնված է  
«գիտական քարտուղարներ» պատրաստելու համար, իսկ

Ռուսաստանի ժողովրդական լուսավորութեան միջնակարգ տրնները՝ «ազնվականների և աստիճանավորների» դասակներին դաստիարակելու համար:

Կլասիք գիմնազի ծրագիրը, կազմված մեզանից հեռու դարերում, վորչափով անփոփոխ շարունակում է գոյութուն ունենալ և հետագայում, նույն չափով գիմնազիական կրթութեան սիստեմն աչքի յե ընկնում իր շափազանց ավանդապահութեամբ, պահպանողականութեամբ, և նույն իսկ թշնամի է ժամանակակից կուլտուրայի: Լեզվի ծրագիրը, վոր պահպանել և սխուրաստիք դպրոցի քերականական բնույթը, դարձավ հին լեզուների հումանիտական տիպիք ծրագիրը. Յիցերոնը, Վիրգիլիոսը, Հոմերոսը և պատմագիրները դարձան պաշտամունքի առարկա: Մատեմատիկայի ծրագիրը, վորով թվարանութունը վերջանում էր տեխնիքական կանոններով, վոր առևտրական կապիտալիզմի դարի պահանջն էր, և վորը հասնելով «Եվկլիդեսյան» յերկրաչափութեան և յեռանկյունաչափութեան, քարացավ, պատկերացնում էր մատեմատիքական վտութեան վիճակը մինչև Դեկարտի և Լայբնիցի ժամանակները: Այդպես էլին նաև այն ժամանակվա կուլտուրայի ճաշակով ռազմաքաղաքական պատմութունը, աշխարհագրական գիտելիքները:

Յեթե այս բոլորին մենք ավելացնենք նաև ուսուցման «թղթե» մեթոդը (ձեռնարկ և տետրակ) և ձևական-բյուրոկրատական դաստիարակութեան ընդհանուր վոգին, մենք կըմբռնենք, թե նման դպրոցը վորպիսի խոր հակասութեան մեջ է յեղել մեր ժամանակի ճարտարարվեստ կուլտուրայի պահանջների հետ: Այսպիսի դպրոցի սանը ժամանակակից կյանքում զգում էր նույնպիսի անճարակութուն, վորպիսին զգում էր նաև նրան դաստիարակող կղերա-

կան-ազնվապետական-չինովնիկական պետութիւնը: Ժամանակակից կյանքի համար հարկավոր չեն վոչ պարապ, լոկ միայն իմացական կյանքի մարդիկ, վոչ, այսպես կոչված, «տեսարաններ» (տեորետիկներ) այնպիսի կրթութեամբ, վոր ժամանակակից կուլտուրայից հետ ե մնացել մի քանի դար, վոչ ել իշխանների և նմանների դիվանատների համար «գիտուն քարտուղարներ»: Ավանդական դպրոցի հիմնական թերութիւնը այն ե, վոր նա՝ ճարտարարվեստի և գիտութիւնների, հայտնագործութիւնների ու գյուտերի այս մեր յեռուն դարում, գործի, աշխատանքի, գործունեյութեան, դեմոկրատիայի մեր այս լարված դարում տալիս ե մեզ իսկական վայրենիներ թե մտքով, թե ունակութեամբ, տալիս ե մարդիկ, վորոնք ընդունակ են միայն խանդարելու պրոգրեսը իրանց մտավոր խզուկ պաշարով և գործնական անճարակութեամբ մարդիկ, վորոնք աչքի յեն ընկնում իրանց ազնվապետական արհամարհանքով՝ դեպի ժողովրդական զանգվածը:

**7. Աւստրալիայի դպրոցը յեվ սրագիցիոն (ավանգադան) դպրոցի բարեփոխութեան սովորական նախագիծները**

Ավանդական դպրոցի բարեփոխութիւնը վաղուց ե հերթական խնդիր դարձել: Բարեփոխութեան նախագիծները սովորաբար ամփոփվում եյին հետևյալ կետերում. 1. Քերականութեան փոխարեն ընական գիտութիւններ և դասական լեզուների փոխարեն նոր ժամանակի գիտելիքներ. 2. Մտցնել ծրագրի մեջ գիտողական ուսուցում և ավելի ուժ տալ դասարանի գործոն մասնակցութեան. 3. Միջնակարգ դպրոցի բարձր դասարանների պոլիֆուրկացիա. 4. Զարկ տալ

բարձրագույն և միջնակարգ մասնագիտական դպրոցներին ծավալման:

Հասարակագիտորեն այդ նախագիծները հեշտ և բացատրելի ծնունդ առած կապիտալիստական ճարտարարվեստը գիտնական քաղաքականների կարիք չունենք, նրան հարկավոր էլին ճարտարապետներ (ինժեներ), տեխնիկներ, վարպետներ, մեքենագետներ (մեխանիկ), քիմիկոսներ, վաճառականներ, ագրոնոմներ: Դրա համար ել բացվում էլին բարձրագույն մասնագիտական և պրոֆեսիոնալ դպրոցներ: Վերջին ախպի դպրոցները ճարտարարվեստի համար պատրաստում էլին միջին տեսակի ծառայողներ, յերկրորդները՝ բարձր տեսակի ճարտարարվեստի բանվորական մասսաների ստորին խավերը կազմում են սև աշխատանքի բանվորները՝ մշակները: Բարձրագույն մասնագիտական դպրոցներն սկսեցին դանդաղավել, վոր սովորողները բավարար չափով պատրաստված չեն լինում: Ծարտարարվեստի դարի ապագա գործիչներին նախապատրաստելու առաջին քայլը յերա՛վ ունակական դպրոցների ծնունդը, գիմնազիական ծրագրի փոփոխությունը և բնական գիտությունների ուսուցումը: Հաջորդ քայլը, վոր ավելի խոր և հիմնական էր, դա գիմնազի պոլիֆոլերկացիան էր: Դրաբոցական ծրագրի և դպրոցի առաջ դրված խնդիրների փոփոխության հետ՝ փոփոխվում էր նաև դպրոցի ուսուցման յեղանակը (գիտողականություն և գործունություն): այդ փոփոխությունների նպատակն էր՝ պատրաստել իրական, ճշմարիտ գործիչներ:

Ուրեմն, մենք տեսնում ենք, վոր դպրոցական բարեփոխության սովորական նախագիծները պայմանավորված են նոր ժամանակի վոգով և այդ տեսակետից նրանք թվում են հառաջադիմական: Սակայն

այդ նախազիծները խճճվում են նույն հակասություններին մեջ, վորոնց մեջ խճճված է կապիտալիստական ճարտարարվեստը:

Կապիտալիստական ինդուստրիան չի տալիս ինդուստրիայի առեղծվածի կատարյալ լուծումն: Այդ առեղծվածը գտնվում է այն հակասությունների մեջ, վոր յերևան են դալիս ձեռքի աշխատանքից ճարտարարվեստին անցնելու մոմենտին: Ճարտարարվեստը դեմոկրատացնող ամենամեծ ուժն է. նա, ինչպես առաջ ցույց տվինք, վոչնչացնում է բանվորներին մշտապես վրեժ մասնագիտության բեվեռելու անհրաժեշտությունը, վորովհետև գործարանի ընդհանուր ընթացքը կախված է վոչ թե բանվորներից, այլ մեքենայից. իսկ մեքենայի հետ ծանոթանալը համեմատարար արագ է կատարվում: Հենց դրանով էլ մեքենական ճարտարարվեստը աշխատանքի խիստ բաժանման անհրաժեշտությունը վերացնում է և դրա հետ միասին վերացնում է նաև տնտեսական ու սոցիալական նվիրապետությունը: Մեքենան ազատություն է մտցնում աշխատանքի ու կուլտուրայի շրջանը: Միայն մեքենական ճարտարարվեստի դարում հնարավոր է միայնգաման հիմնավորապես խոսել II աստիճանի աշխատանքի համաժողովրդային միասնական դպրոցի մասին և վոչ թե համբարական դպրոցի:

Կապիտալիստական ճարտարարվեստը հակառակ է հավասարության. նա ձգտում է պահպանել սոցիալական դիֆերենցիացիան և աշխատանքի շերտավորումը: Դրանով են բացատրվում ավանդական դպրոցի բարեփոխության սովորական նախազիծների բոլոր թերությունները:

Կապիտալիստական ճարտարարվեստը մեծագույն չափով հենված է հասարակ բանվորների բանակի

վրա, մի բանակ, վոր իր բազմամարդությամբ միանդամայն անհարկավոր ե ճարտարարվեստի համար, բայց շատ հարկավոր արդյունաբերողի համար: Այդ բանակն ե, վոր ցմահ կատարում ե մեքենայի պարտականություն: Տալ դրանց ինդուստրիալ և առհասարակ քիչ շատ տանելի կրթություն՝ արդյունաբերողի համար հաշիվ չե. դրանով արդյունաբերության ծախսերը կավելանան և շահը կպակասի, նուանց վորևե ոգուտի տվյալ ձեռնարկությանը, վորովհետև այդ ձեռնարկության համար վորակյալ բանվորների կարիքն այնքան մեծ չե: Դրա համար ել ընդհանուր կրթության նախագիծները տարրական դպրոցի սահմանից դենը չեն անցնում. միայն տարրական դպրոցըն ե, վոր հավակնություն ունի միասնական դպրոցի կոչման, այն ել վորոշ առարկություններով:

Բայց և այնպես ճարտարարվեստը պահանջում ե վորոշ քանակությամբ «ուսյալ» բանվորներ. այդ նպատակով ել բացվում են զանազան պրոֆեսիոնալ դըպրոցներ. սակայն այդ արհեստագիտական, տեխնիքական, արդյունաբերական և այլ տեսակ դպրոցները նույն իսկ Ամերիկայում և Գերմանիայում շատ ել չեն փայլում իրանց մանկավարժական արդյունքներով:

Նման արհեստային դպրոցների մանկավարժական խեղճությունը, պարզ ե, ուրիշ տեսակ ել լինել չեր կարող: Տվյալ մեքենայի և տվյալ ձեռնարկության վորոշ ճյուղին անհրաժեշտ մասնագիտական հմտություն ձեռք բերելու համար՝ ճարտարարվեստի բանվորին կարճ ժամանակ ե հարկավոր, և հազիվ թե դրա համար կարիք լինի բազմամյա դասընթացներով դպրոցի. իսկ այդ հմտությունը ընդարձակելու և խորացնելու ամեն մի փորձ կապված ե գիտական բազմարվեստյան կրթության հետ, վորի մասին արդեն



խոսեցինք: Այդ դեպքումն ել պետք է հրատարակել «մասնագետից», այսինքն՝ բանվորին ձեռնարկութեան կամ արդյունարեւութեան տվյալ ճշուդին ամրացնելուց: Իրանով աշխատանքի բաժանման սկզբունքը, դիֆերենցիացիան և նվիրապետութեանը կխախտվի, մի հանգամանք, վոր կապիտալիստական ճարտարվեստը չի թույլ տա: Ահա դրա փոխարենն ել մի շարք փորձեր են կատարվում՝ հիմնել նման դպրոցներ հատկապես աշխատանքի բաժանման սկզբունքի վրա: Իրա հետևանքը լինում է այն, վոր գիտական-բազմարվեստյան կրթութեանը փոխարինվում է ուսումնասիրհետաքննչին կրթութեամբ: Այսպես, բացվում են տեխնիքական դպրոցներ, վորտեղ տիրում է ձեռքի աշխատանքը, ինդուստրիալ դպրոցներ՝ արհեստային բնույթով, գործնական դպրոցներ... ահապիսի ուսումնական-տեսական ծրագրով, աշխատային և գիտողական կրթութեան միասնականում: Այդ թեքումը դեպի ձեռարհեստի և արհեստային պրոֆեսիոնալիզմի կողմը շատ բնորոշ է ճարտարարվեստի ժամանակակից տերերի համար, վորոնք ձգտում են հանուն աշխատանքի բաժանման, դիֆերենցիացիայի և նվիրապետութեան, խանգարել ճարտարարվեստի ապագա բնական զարգացումը և նրա անխուսափելի հետևանք՝ միասնական աշխատանքի կրթական դպրոցի ծնունդը:

Անբավարար վիճակի մեջ է գտնվում նաև կապիտալիստական ճարտարարվեստի բարձր ծառայողների պատրաստութեան գործը: Յես կուսեյի ուղղակի, վոր այդ գործը ողի մեջ է կախված: Նույն իսկ մասնագիտական տեսակետից նա գուրկ է հիմքից: Իրա համար ել բարձրագույն մասնագիտական դպրոցը ձգտում է իրեն յենթարկել միջնակարգ դպրոցը և նրա վրա բարձել ուսանողներին տարրագույն մաս-

նագիտական հմտություններ ու գիտելիքներ մատակարարելու գործի գոնե մի մասը, վոր ծանրացած է իր վրա, հակառակ դեպքում բարձրագույն մասնագիտական դպրոցը պիտի կործանվի տարրական գործնական պարապմունքների և միջանկյալ տեխնիքական զբաղմունքների շատության տակ: Բարձրագույն մասնագիտական դպրոցը հիմքից զուրկ է նաև հանրակրթական տեսակետից. այդ բարձրագույն մասնագիտական դպրոցները իրանց հակայական հանրակրթական ուսման ծրագրով բոլորիս աչքի առաջն են:

Այսպես ուրեմն, մենք տեսնում ենք, վոր ավանդական դպրոցի բարեփոխության սովորական նախագիծները միայն սուղոգատներ են: Սակայն կյանքը շարժում է պահանջում: Յեվ այս բոլորի հետևանքը դպրոցական բարեփոխության կենդանի դիակ հանձնաժողովներ, վորոնք ամենուրեք իրանց գոյությունը պահում են տասնյակ տարիներով: Այսոր դպրոցական բարեփոխության առեղծվածը դարձել է արդեն քրոնիքական, նման հնացած՝ անհույս հիվանդության: Այդ ջուր ձեծելուն պեսք է վերջ դնել:

### Տ. Աշխատանքի դպրոցը յեվ մանուկը

Մարդկության առաջադիմությունը մենք տեսնում ենք մարդու հարածուն իշխանության մեջ բնության վրա, գրանով էլ կուլտուրայի հառաջադիմությունը նույնանում է աշխատանքի հառաջադիմության հետ: Աշխատանքը, հասնելով իր զարգացման ամենաբարձր աստիճանին, դառնում է ճարտարարվեստ աշխատանք, և աշխատանքի կատարելագույն դպրոցը՝ ինդուստրիալ դպրոցն է: Կրթության նպատակն է՝ մտցնել մանուկին ժամանակակից ճարտարարվեստի կուլտուրայի տիրապետության սահմանը:

Բայց այս նպատակը վախճանական նպատակ է, վորին հասնել կարելի չէ միայն յերիդասարդական հասակում: Կրթությունը մի գործողութուն է (պրոցես) և վորպես այդպիսին, ունի վոչ թէ միայն վախճանական նպատակ, այլ է յելակետ: Այդ յելակետը մանուկի բնածին հատկություններն են: Աշխատանքի դրարոցի մանկավարժության կենտրոնական (եյական) խնդիրն է՝ յելնելով մանուկի բնածին հատկություններից, մտցնել նրան ժամանակակից ճարտարարվեստի տիրապետության սահմանը:

Մանուկի բնական կյանքը լի չէ խաղով, և խաղըն է մանուկի գերագույն ուսուցիչը: Խաղը մանուկի յեռանդի աննպատակ վատնումը չէ. խաղի մեջ զարգանում է և յերևան է գալիս ամբողջ մանուկը իր ամենախոր հոգեկան առանձնահատկություններով. խաղերի մեջ զարգանում են մանուկի շարժումների և զգայությունների գործարանները, նրա ուշադրությունն ու յերևակայությունը, սրամտությունը և կորովամտությունը, նամանողությունն ու ստեղծագործությունը, սոցիալական զգացումները, որենքներին հրպատակվելը և այլն: Խաղալ՝ մանուկի համար կնշանակե ձեռք բերել փորձ, այն ել այնպիսի փորձ, վոր միացած է գործոն աշխատանքի հետ:

Պարզ է ուրեմն, վոր մանուկի դաստիարակության ժամանակ մենք պետք է յելակետ ունենանք մանուկի խաղերը, և ամենավաղ, այսինքն՝ մինչդրարոցական դաստիարակությունը պետք է լինի վոչ այլ ինչ, յեթէ վոչ մանկական խաղերի ոգտագործումն մանկավարժների ձեռքով: Այստեղ հարկավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, վոր վաղ մանկության (3—7 տար.) բնական խաղերը սովորաբար ձգտում են վորոչ առարկայական (օբյեկտիվ) հե-

տեանքների: Մարդկային գործունեությունը, վորը ձգտում է վորոշ առարկայական հետեանքների հասնել, կոչվում է զբաղմունք: Վաղ մանկության խաղերն, ուրեմն, մանուկի ազատ զբաղմունքներն են: Այսպիսով նախադպրոցական կրթության խնդիրն է մանկավարժորեն ընտրել և մանկավարժորեն նպատակահարմար կազմակերպել փոքրիկ յերեխայի ազատ բնական զբաղմունքները:

Ուշագրություն պետք է դարձնել մի հանգամանքի վրա. մանկական խաղերի մեջ մեծ տեղ են գրավում նամանողության ակտերը (գործողությունները). նամանողական խաղերը 3—8 տարեկան յերեխաների մեջ մեծ ժողովրդականություն են վայելում: Այդ հասակի տիպիք նամանողությունը լինում է կամ դրամատիք կամ հորինողական: Մանուկի նամանողությունը լինում է կամ բնազդաբար, առանց վորևե նըպատակի, հենց միայն նամանվելու համար, կամ մանուկը նամանվում է յուրատեսակ, ստեղծագործելով յուրահատուկ, վոչ ճշտորեն: Առաջին տեսակ նամանողությունը, մանուկների ակամա «կապկանալը», վոր հատուկ է մանկան վաղ հասակին, պետք է տարբերել յերկրորդ տեսակից՝ կամավոր, գիտակցական նամանողությունից, վոր ավելի ուժեղ է ուշ հասակում:

Հորինողական նամանողության մանկավարժական նշանակությունը ակնհայտնի յե. մանուկը գործնորեն ուսանում է հասարակության ամեն մի սովորույթ, ամեն մի գործ, ամեն մի պրոֆեսիա, ոգտվելով մանկավարժության կարեվորագույն մի որեմքով, այն է՝ սովորիբ անել՝ անելով, վոր միակ ճշմարիտ միջոցն է ըմբռնել սովորելու: Դաստիարակության մեթոդիկայի համար կարեվոր է նկատել, վոր մանուկը դրամատիք նամանողության միջոցին շատ հաճախ ոգտվում

ե, փոխանակ իրական առարկաների և գործերի, սիմ-  
վոլներով, պատկերներով և որինակնեվով. «զանա-  
զան յերևակայական մտացածին առարկաների ու սիմ-  
վոլիք շարժումների ոգնությամբ՝ մանուկը կարողա-  
նում է վերարտադրել ամեն բան՝ սկսած լոկոմոտիվի  
աղմկալի շարժումներից մինչև մնջկատակի անխոս  
արվեստը, կամ անցնել հացի միջուկից շինած գնդակ-  
ների խաղից՝ յեկեղեցու կառուցման:

Վերև ասածներից մեզ համար պարզվում է նա-  
խադարոցական հասակի աշխատային կրթությունը:  
Այդ կրթությունը կայանում է նրանում, վոր մանու-  
կը (վորի հետաքրքրությունը մինչդարոցական հասա-  
կում չափազանց զարգացած է լինում դեպի շարժում-  
ներն ու գործողությունները) դիտե ու զննե ավելի  
հասակավոր աշխատավոր հասարակության գործողու-  
թյուններն ու զբաղումները, և մեքենաների ու մեխա-  
նիզմների գործառնություններն ու շարժումները:

Մենք բոլորս շատ լավ գիտենք, թե ինչպես մա-  
նուկը՝ ժամերով կանգնած, նայում է վառարան շինո-  
ղի, վորմնադրի կամ մի այլ արհեստավորի աշխատան-  
քին, թե ինչպես նա արձանացած՝ ուշի ուշով դիտում  
է մեքենայի շարժումները, վորի մոտից նրան դրժ-  
վար է լինում հեռացնել, թե ինչպես նա ջարդում է  
ինքնաշարժ խաղալիքն այն նպատակով, վոր քանդե  
և դիտե նրա ներքին մեխանիզմը և վերջապես, թե  
ինչպես նա, մանուկը, կազմում է զանազան հարմարու-  
թյուններ, հորինում է մեխանիզմներ, վերարտադրում  
է գործողություններ: Մարդկանց և մեքենաների գործո-  
ղությունների զննությունը չափազանց առատ նյութ  
է տալիս յերեխաների անձնական զբաղմունքների հա-  
մար, վորոնք տարիներ շարունակ խաղում են շո-  
գեմեքենա, լոկոմոտիվ, ջրաղաց, սավառնակ, յեր-

7. Շրջապատող աշխատանքի կյանքը, վորպես  
առաջին օարվա պարապմունքների նյութ

Շարաթն անցավ. մեր քաղաքային դպրոցի «նորեկները» բավական ընտելացան դպրոցին: Սակայն մենք վոչ մի գործ չենք կարգավորել, վոչինչ չունինք. վոչ պարենավորումն, վոչ դպրոցական անհրաժեշտ իրեր և վոչ մեզ հարկավոր մի այլ բան: «Մենք վոչինչ չունինք» — ավելի շատ նյութ աշխատանքի դպրոցի համար: Յեթե մենք ամեն ինչ ունենայինք, յեթե մենք՝ մեծերս ու ուսուցիչներս, ստեղծեյինք աշխատանքի դպրոցը, յերեխաներին վոչինչ չեր մնա տնելու և ստեղծելու. նրանց կմնար միայն պասսիվ կերպով դիտել:

Մենք վոչինչ չունինք: Իսկ ի՞նչ է մեզ պետք: — Գրքեր, թուղթ, գրչածայրեր, մատիտներ և այլ «կուլտուրական առարկաներ». կարտոֆիլ, զազար, հաց, աղ, թեյ և այլ «պարենավորման առարկաներ». մեխեր, մկրատ, սոսինձ, ճոթեղեն և այլ տնային առարկաներ: Ավելի մեծ յերեխաների մասնակցությամբ մենք կազմում ենք ցուցակ. ի՞նչ գնել, վորտեղ գնել: Յեւ ահա մենք ունինք թեմաների մի շարք, շաղկապված մի ընդհանուր թելով՝ առևտուր մեր թաղում: Մի կողմից մենք ծանոթանում ենք տեղի դիրքի հետ. գլխավոր փողոցը մեր թաղում, մյուս փողոցները, նրբափողոցները, փակուղիները, «ուղիղ», «դեպի աջ», «դեպի ձախ», «ինչպես չմոլորվել»: Վերջում յերեխաները կազմում են քարտեզի նման մի բան: Նման եմ ասում, վորովհետև դա ավելի շուտ պատկերների հավաքածու կլինի, քան քարտեզ: Այսինքն յերեխաները ձևակերպում են (ծեփում կամ նկարում են) դպրոցի փողոցը, վորպես ճանապարհ և

նշանակում են այդ հանապարհի յերկու կողմը գտնւ-  
ված ամենանշանավոր շենքերը: Պետք է ձգտել, վոր  
այդ ձևակերպությունը ըստ կարելույն սխտեմատիկ  
լինի: Այդպես պարզ ձևակերպում է նաև ամեն մի  
փողոց, «դեպի աջ» և այլն: Այսպիսով ստացվում է  
միջնադարյան քարտեզի նման մի բան, ճանապարհն  
ու յերկու յերեք շենքեր, ճանապարհի «ուղեցույցնե-  
րը»: Պատի վրա այդ փողոցները միացվում են իրար  
հետ «ուղիղ», «աջից» և այլն: Սակայն բնավ շտապել  
չի կարելի. յերեխաները փոքր են, և այս բաժանմուն-  
քում քարտեզ նկարելու մասին վոչ մի խոսք չի կա-  
րող լինել. նրանք կարող են անել միայն առաջին  
քայլերը. ձևակերպել տեսած փողոցներն ու նրանցում  
գտնված նշանավոր շենքերը: Յեթի մեր ձեռքի տակ է  
նաև յերկրորդ բաժանմունքը, նա էլ պարասպում է  
նույն բանով, սակայն չի նկարում, այլ «գծադրում  
է» թաղամասի քարտեզը: Մյուս կողմից մենք կարող  
ենք կատարել մի շարք եքսկուրսիաներ «մեր թաղա-  
մասի առևտուրը տեսնելու համար». այս դեպքում  
եքսկուրսիայի վայրերն են պարենավորման, նպա-  
րեղենի, բանջարեղենի, մսավաճառի, կտորեղենի, յեր-  
կաթեղենի, գործիքների, կահ-կարասիների, դեղորայ-  
քի և գրենական պիտույքների խանութները: Դասա-  
րանում առաջուց մենք դնում ենք հետևյալ հարցերը.  
վճարտեղ կարելի յե գնել այս ինչ բանը, ել ի՞նչ կա-  
րելի յե գնել այնտեղ: Իսկ խանութում—«Ունի՞ք ար-  
դյոք այս ինչ առարկան, ել ի՞նչ ունիք, ցույց տը-  
վեք...»: Ի դեպ, ավելի մեծերի համար ահագին  
նյութ կլինի թվաբանության համար:

Սակայն, հավանորեն, մեր թաղամասում շատ  
բան չի ճարվի և հարկավոր կլինի գնալ «կենտրոն»:  
Ահա թեմաներ.—ճանապարհ դեպի կենտրոն, կենտ-

կապված են լինում մանկական ակտիվ գործունեյության հետ («տուր փորձեմ՝ մի բան շինեմ դրանով»)։ Գրանով ել սահմանվում է տարրական կրթության բովանդակությունը, այն է՝ աշխատանքի գործիքների և յեղանակի աստիճանական կատարելագործությունը՝ աշխատանքի մաքսիմալ արտադրողականության հասնելու համար։ Պարզ է, վոր խնդիրն այս կերպ դնելով, այլևս հնարավոր չի լինի տնային աշխատանքի շրջանակներում գործող մանկական աշխատային կուպերացիան վերածել արհեստային-տնայնագործական դպրոցի, գործիքները, առարկաները, աշխատանքի յեղանակը աշխատանքի սահմանից հանում են ուտանում՝ մեկ կողմից դեպի բնական գիտությունները, մյուս կողմից՝ դեպի սոցիալական կուլտուրան, վոր հիմնված է արտադրության միջոցների պրոգրեսի վրա։

Փարբիկան ու գործարանը-ահա յերիտասարդի աշխատանքի դպրոցը։ «Գործարանային աշխատանքը կարող է լինել նույնքան մաքուր, նույնքան լավ դրված, մինչև անգամ ավելի լավ, վորքան տնային աշխատանքը»։ Այնտեղ, վորտեղ հասակավորները աշխատում են, դեռահասները և յերիտասարդները պետք է սովորեն. գործարան-դպրոցումն է, վոր պետք է դաստիարակվի բանվոր գիտնականը։ Գործարաններն ու Փարբիկաները մարդկային մտքի՝ բնության վրատարած գերագույն հաղթանակների շտեմարաններն են. և միայն մարդկային ստոր շահասիրությունն է, վոր դրանց դարձրել է աղբյուր տգիտության, աղքատության և քրախնքի։

Մենք մեքենական ճարտարարվեստին շատ ներբողներ նվիրեցինք. վերջում մի ներբող ևս։ Ճարտարարվեստը մեծագույն ուսուցիչն է վնչ միայն տեխնիկայի և բնական գիտությունների, միաժամանակ նա



մեծագույն ուսուցիչն է նաև սոցիալական (հասարակական) կյանքի: Գործարանի կազմակերպող ազդեցութիւնը և այն սքանչելի հասարակական դաստիարակութիւնը, վոր գործարանը տալիս է գործարանում աշխատողներին, ամենքին հայտնի յեն: Սակայն ճարտարարվեստը վոչ թէ միայն սոցիալական դաստիարակութիւն է տալիս, այլ և սոցիալական կըրթութիւն՝ ուսում և այն ել շատ լայն չափով:

Ճարտարարվեստն իր արտադրութիւնների համաշխարհային փոխանակութեամբ առաջնորդում է մեզ ամբողջ յերկրագունդը ճանաչելու, ամբողջ մարդկութեան հետ մոտիկանալու: Միայն մարդն է, վոր մարդուն բեռնել է մեքենային. մեքենան ինքը՝ բոլոր այն նյութերով, վոր գալիս մտնում են մեքենայի տակ և ապա դուրս գալիս, մարդկանց ցրում է ամբողջ յերկրագնդի վրա և նրանց մասնակից անում միջազգային մարդկային կյանքի բազմազան և բարդ յերևույթներին: Յեւ այսպես, աշխատային պարագաներում կազմակերպված խաղերը՝ մանուկների համար, տնային աշխատային կոպերացիան՝ պատանիների և ճարտարարվեստը՝ յերիտասարդների:

### 9. Ճարտարվեստ աշխատանքի դպրոցը.-

#### Գյուղը յեվ ապագայի պետւթյուներ

Նոր դպրոցը արդիւնաբերական քաղաքի վաճակն է: Հապա գյուղը: Ի՞նչպես հաղորդակից լինի գյուղը այն բարձրագույն դպրոցին, վորը պատկերացնում է մարդու ուժի հաղթանակը բնութեան վրա:

Գյուղն էլ, թեև ավելի թույլ չափով, դառնում է ճարտարարվեստի նվաճման առարկա: Այդ նվաճումը

կատարվում է յերկու ճանապարհով. մեկ կողմից գյուղերում հիմնվում են ֆաբրիկաներ և գործարաններ, իսկ մյուս կողմից՝ յերկրագործությունը վերածվում է գյուղատնտեսական ճարտարարվեստի, հենված գյուղատնտեսական մեքենաների և գիտական ագրոնոմիայի վրա: Այսպիսով գյուղն էլ մտնում է ճարտարարվեստի կուլտուրայի շրջանը, և հետևապես հնարավոր է դառնում ճարտարարվեստ աշխատանքի դրարոցը: Արդյունաբերական մեծ գյուղերն ու ագրիկուլտուրայի շրջանները նոր դպրոցի ոջախներ են: Գյուղի ու քաղաքի հակադրությունը ապագայում կհարթվի: Սակայն այժմ ի՞նչ կարելի չէ անել յերկրագործական հետամնաց տեղերում, այն գյուղերում, վորտեղ դեռ տիրում է հին գեղջկական կյանքը: Ինձ թվում է, վոր անդրջրհեղեղյան արջի վորջերը հազիվ թե մանկավարժական նպաստավոր միջավայր կարողանան լինել նոր դպրոցի համար. այդ է պատճառը, վոր յերիտասարդների փախուստին դեպի կուլտուրական կենտրոններ՝ մենք միայն համակրել կարող ենք: Համկնայն դեպս, այդ հետամնաց անկյունները չեն կարող նոր դպրոցի տնկարաններ լինել, մանավանդ նրա բարձրագույն աստիճանների համար:

Նոր դպրոցը գալիս է ճարտարարվեստի կենտրոններից, մայրաքաղաքներից և մեծ քաղաքներից: Քաղաքները, արդյունաբերության կենտրոնները հանդիսանում են նաև կենտրոններ մտավոր կուլտուրայի և աղբյուր մանկավարժական բարեփոխությունների: Ճարտարարվեստ-աշխատանքի դպրոցը, քաղաքային կուլտուրայի այդ գավակը, գյուղում դառնում է կուլտուրայի առաջնորդը, պիոները: Մեր հետամնաց, խուլ գյուղի համար նոր դպրոցը՝ գյուղը ինդուստրիալիզացիայի յենթարկող ազդակներից մեկն է, և դը-

րանում և կայանում նրա քաղաքակրթական նշանա-  
կությունը: Նա մտցնում և գյուղը բարձր կուլտարա:  
Այսպիսով նոր դպրոցը հանդիսանում և յերկրի շար-  
ժիչ ուժը, վոր տանում և դեպի ճարտարարվեստի  
պրոգրեսը: Յեւ այդ մտքով նա հնարավոր և և ցան-  
կալի ամենուրեք, նույն իսկ գյուղական յերկրում:

Սակայն ճարտարարվեստ աշխատանքի դպրոցի  
կատարյալ բարգավաճումը հնարավոր և միայն կա-  
տարյալ ինդուստրիալ (ճարտարարվեստ) յերկրում:

Ապագայի պետութայունը մեզ պատկերանում և,  
վորպես տնտեսական-ճարտարարվեստի պետութայուն,  
վորի միջոցին հասարակութայունը կազմված կլինի ար-  
տադրող միավորութայուններից և վորի կառավարու-  
թյունը կլինի տնտեսական ընտրովի վարչութայուն:  
Այդ վարչութայունը կկազմակերպե հասարակական ար-  
դյունաբերութայունը. «անձեր կառավարելու փոխարեն՝  
կլինի իրերի ու արտադրութայան կառավարութայուն»  
և հետևապես՝ «ժողովուրդը կարիք կզգա վոչ թե  
կառավարութայան, այլ վարչութայան, վոր ավելի պարզ  
կսահմանե և ավելի խելացի կխմբավորե այն աշխա-  
տանքները, վոր հասարակութայունը պիտի կատարե՝  
իր բոլոր անդամների Ֆիզիքական ու բարոյական  
բարեկեցութայան համար»: Պարզ և՛ այդ ճարտարար-  
վեստ-աշխատանքի ժողովրդական պետութայան մեջ,  
վոր «պիտի ժառանգե վոչ թե միայն աշխատանքի  
գործիքները, վոր ստեղծել և կապիտալիզմը, և գի-  
տութայունը, վոր ծնունդ և առնում տեխնիկայի հա-  
ռաջադիմութայունից, այլև կոպերատիվ աշխատավո-  
րութայան այն ձևերն ու յեղանակները, վորոնք ժա-  
մանակի ընթացքում պիտի սահմանվեն գործարաննե-  
րում՝ մարդկանց ուժերն ու հմտութայունները և ժա-  
մանակը հնար եղածի շափ ավելի լավ ոգտագործելու»:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՊՐԱԿՒ

1. Յերկու խոսք . . . . . 3 յեր.
2. Առաջարան հեղինակի . . . . . 5 »
- I. ՎճՐՆ Ե «աշխատանքի դպրոցը»
1. Աշխատանք և աշխատային կրթություն . . . . . 7 »
2. Կոպերացիա և աշխատանքի դպրոց . . . . . 9 »
3. Ճարտարարվեստը (ինդուստրիա) և յերիտասարդի աշխատային կրթությունը . . . . . 12 »
4. Կրթական և պրոֆեսիոնալ արհեստային դպրոցը . . . . . 14 »
5. Աշխատային և իլյուստրատիվ դպրոց . . . . . 18 »
6. Աշխատանքի և տրադիցիոն դպրոց . . . . . 21 »
7. Աշխատանքի դպրոցը և տրադիցիոն դպրոցի բարեփոխության սովորական նախագիծները . . . . . 24 »
8. Աշխատանքի դպրոցը և մանուկը . . . . . 29 »
9. Ինդուստրիալ աշխատային դպրոցը.~  
    Փյունը և ապագայի պետությունը . . . . . 35 »

